

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2027–2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2026թ

Բովանդակությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ 3

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 4

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՃՐԱԳԻՐԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 14

2.2. Տեսլականը և նպատակները 19

2.3. Թիրախային խումբը 26

2.4. Առաջարկները 27

3. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ 33

3.1. Ենթածրագիր N 1 33

3.2. Ենթածրագիր N 2 36

3.3. Ենթածրագիր N 3 38

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ 40

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԸ 43

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի՛ գյումրեցիներ,

Գյումրու զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց մարդկանց սոցիալական բարեկեցության, անվտանգության և արժանապատիվ կյանքի պայմանների ապահովման: Համայնքային սոցիալական քաղաքականության կենտրոնում պետք է լինի մարդը՝ իր կարիքներով, հնարավորություններով և համայնքային կյանքում լիարժեք մասնակցելու իրավունքով:

Գյումրի համայնքի 2027–2029 թվականների տեղական սոցիալական ծրագիրը մշակվել է համայնքում իրականացված կարիքների գնահատման և ձևավորված առաջարկությունների հիման վրա: Այդ նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել են տեղական ինքնակառավարման մարմնի, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատ փորձագետներ և համայնքի բնակիչներ:

Կարիքների գնահատման ընթացքում վեր են հանվել տարբեր խմբերի համար կարևոր խնդիրներ՝ կապված նյութական աջակցության, կացարանի, տեղափոխման, խնամքի, վերականգնողական և զբաղվածության, անկախ կյանքի և համայնքային միջավայրի մատչելիության հետ: Այս խնդիրների լուծման համար ծրագրում առաջարկվել են կոնկրետ գործողություններ և ծառայությունների զարգացման ուղղություններ:

Մեր նպատակը միայն առանձին աջակցություններ տրամադրելը չէ, այլ աստիճանաբար ձևավորել ավելի համակարգված, հասանելի և շարունակական սոցիալական ծառայությունների համակարգ, որը հիմնված կլինի բնակչության իրական կարիքների վրա և կօգնի կանխել սոցիալական խնդիրների խորացումը:

Ծրագրի նախագիծն անցել է նաև հանրային քննարկման փուլ՝ հնարավորություն տալով բնակիչներին, մասնագետներին և շահագրգիռ կազմակերպություններին ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտարկումները:

Վստահ եմ, որ համայնքապետարանի, ավագանու, պետական և հասարակական կառույցների, մասնագետների և բնակիչների համագործակցությամբ կարող ենք կառուցել ավելի ներառական, արդար և աջակցող Գյումրի, որտեղ յուրաքանչյուր մարդ կզգա, որ համայնքը պատրաստ է արձագանքել իր կարիքներին և աջակցել դժվարությունները հաղթահարելու ճանապարհին:

Գյումրի համայնքի ղեկավար

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գյումրին հանդիսանում է Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքը՝ ինչպես տարածքով, այնպես էլ բնակչությամբ: Քաղաքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ Ախուրյան գետի ձախ ափին, Երևանից 126 կիլոմետր հեռավորության վրա: Սահմանակից համայնքներն են՝ Ախուրյան, Ծիրակ, Ամասիա և Արթիկ:

Գյումրին տեղակայված է Ծիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում՝ ծովի մակարդակից 1550 մետր բարձրության վրա, հարթավայրային ռելիեֆով, որը ակոսվում է Չերքեզի, Ջաջուռի և այլ ձորերով:

Քաղաքի աշխարհագրական դիրքը նպաստում է ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմավարական զարգացմանը: Ծիրակի բարձրավանդակի տափարակ մասի երկարությունը կազմում է մոտ 35, իսկ լայնությունը՝ 25 կիլոմետր: Գյումրու օդը առողջարար է, տարվա մեջ արևոտ օրերը գերակշռում են: Տարածքի բուսականությունը տափաստանային է, իսկ գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ:

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գյումրի համայնքի բնակչությունը կազմում է 114,700 մարդ, իսկ տնային տնտեսությունների թիվը՝ 34,800: 2025 թվականի տվյալներով գործազուրկների թիվը կազմում է 1,712, ինչը կարևոր ցուցանիշ է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի գնահատման համար:

Գյումրի համայնքը ունի կայուն ֆինանսական հիմք: 2025 թվականի բյուջեն կազմում է 9 մլրդ 193 մլն դրամ, որը ներառում է համայնքի սեփական եկամուտները, պետական դոտացիան, սուբվենցիաները և տարեսկզբի մնացորդը: Բյուջեն ուղղված է համայնքային կառույցների արդյունավետ գործունեությանը, ենթակառուցվածքների արդիականացմանը, սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանը, ինչպես նաև մշակութային և մարզական կյանքի աշխուժացմանը:

Այսօր Գյումրին շարունակում է զարգանալ՝ դառնալով ժամանակակից արդյունաբերական, ֆինանսական և մշակութային կենտրոն: Քաղաքում գործում են տասնյակ խոշոր ընկերություններ, բանկային մասնաճյուղեր և հարյուրավոր տնտեսվարողներ: Համայնքը ակտիվորեն ներգրավված է զարգացման ծրագրերում՝ նպատակ ունենալով բարելավել բնակիչների կյանքի որակը և խթանել տնտեսական աճը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Աղյուսակ N 1
համայնքի սեռատարիքային կազմի վերաբերյալ տվյալների

	Տվյալը	**Ժամանակահատվածը՝ 01.01.2025թ.**[1]
		մարդ
1.	**Մշտական բնակչության թիվը**, որից՝	**114 700**
1.1.	Արական	52 100
1.2.	Իգական	62 600
1.3.	**մինչև 18 տարեկան, որից՝**	**25 500**
1.3.1.	Արական	13 300
1.3.2.	Իգական	12 200
1.4.	**65-75 տարեկաններ, որից՝**	**15 900**
1.4.1.	Արական	5 900
1.4.2.	Իգական	10 000
1.5.	**75-ից բարձր, որից՝**	**6 000**
1.5.1.	Արական	2 000
1.5.2.	Իգական	4 000

Աղյուսակ N 2
համայնքի սոցիալ-ժողովրդագրական կազմի վերաբերյալ այլ տվյալների

	Տվյալը	**Ժամանակահատվածը՝ 01.10.2025 թ. (լրացվում են առկա վերջին տվյալները)**
2.	Տնային տնտեսությունների թիվը	34 800

[1] Տարիքային տվյալները հաշվարկային են հիմնված՝ ՀՀ 2022թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ, մարզի քաղաքային բնակչության կառուցվածքի վրա:

2.1.	Մշտական տնային տնտեսությունների թիվը, որոնք մի տարուց ավել մշտապես բնակվում են համայնքում	34 800
2.2.	Փաստացի բնակվող տնային տնտեսությունների թիվը	
3.	Աշխատունակ տարիքի անձանց թիվը, որից՝	Պետք է ճշտել
3.1.	Կանայք	Պետք է ճշտել
3.2.	Տղամարդիկ	Պետք է ճշտել
4.	Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝	1 864
4.1.	Կանայք	1 322
4.2.	Տղամարդիկ	542
5.	Գործազուրկ անձանց թիվը, որից՝	1 712
5.1	Կանայք	1 220
5.2	Տղամարդիկ	492
6.	Ժամանակավոր աշխատանքի մեկնած (մեկնող) անձանց թիվը, որից՝	
6.1.	Կանայք	
6.2.	Տղամարդիկ	
7.	Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը, որից՝	10 558
7.1.	Կանայք	5 500
7.2.	Տղամարդիկ	5 058
7.3.	Հաշմանդամության 1-ին խումբ կամ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակում ունեցող անձանց թիվը	487
7.4.	Հաշմանդամության 2-րդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում անձանց թիվը	3 650
7.5.	Հաշմանդամության 3-րդ խումբ կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում անձանց թիվը	6 106
8.	Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը	315
9.	Հաշմանդամություն չունեցող, սակայն հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը, որից՝	Պետք է ճշտել
9.1.	Մինչև 18 տարեկան	Պետք է ճշտել
9.2.	18 տարեկանից բարձր	Պետք է ճշտել
10.	Ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպքերի թիվը	262
11.	Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում ներառված ընտանիքների թիվը, որից՝	6 572
11.1.	Ծայրահեղ անապահով կամ անապահովության նպաստ ստացող ընտանիքների թիվը	
11.2.	Չափավոր անապահով ընտանիքների թիվը	
11.3.	Միջին անապահով ընտանիքների թիվը	
11.4.	Անապահով ընտանիքների թիվը	
12.	Ընտանիքների թիվը՝ համաձայն Կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված խնամառության խմբերի	Կիրառելի չէ Գյումրի համայնքի համար
13.	Բազմազավակ ընտանիքների թիվը (3 և ավելի երեխա ունեցող)	
14.	Բնակիչների մեծամասնությունից սոցիալապես մեկուսացած ընտանիքների թիվը	
15.	Անօթևանների կամ որոշակի բնակության վայր չունեցողների թիվը	
16.	Միայնակ չաշխատող կենսաթոշակառուների թիվը	857
17.	Միածնող ընտանիքների թիվը	480
18.	Բռնի տեղահանվածների թիվը, որից՝	
18.1.	Անձ	1 950

18.2.	Ընտանիք	548
19.	Փախստականների թիվը, որից՝	
19.1.	Անձ	
19.2.	Ընտանիք	
20.	Ապաստան հայցողների թիվը, որից՝	
20.1.	Անձ	45
20.2.	Ընտանիք	25
21.	Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը	1
22.	Առանց ծնողական խնամքի մնացած և համայնքում գտնվող երեխաների թիվը, որից՝	87
22.1.	Խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող երեխաների թիվը	21
22.2.	Խնամատարության հանձնված երեխաների թիվը	3
23.	Վերջին մեկ տարում հարկադիր վերադարձած միգրանտ ունեցող ընտանիքների թիվը	
24.	Վերջին մեկ տարում երկարաժամկետ միգրանտ ունեցող ընտանիքների թիվը	
25.	Վերջին մեկ տարում ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերադարձած անձանց թիվը, որից՝	
25.1.	Կանայք	
25.2	Տղամարդիկ	
26.	Նախորդ վեց ամիսների ընթացքում հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ դրության կամ ռազմական դրության) տուժած անձանց կամ ընտանիքների թիվը	

Աղյուսակ N 3
համայնքի տրանսպորտային կապի

Տրանսպորտային հաղորդակցության նկարագիրը (առկայությունը, մեկնման կամ ժամանման հաճախականությունը)	
Տրանսպորտային կապը մարզկենտրոնի հետ (Երևանի և մարզկենտրոնների դեպքում լրացման ենթակա չէ)	լրացման ենթակա չէ
Տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ (Երևանի դեպքում լրացման ենթակա չէ)	Գյումրի–Երևան և Երևան–Գյումրի ուղղություններով ուղևորափոխադրումն իրականացվում է ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով: Հրապարակված տվյալների համաձայն՝ գործում է №358 միջքաղաքային միկրոավտոբուսային երթուղին, որը կապում է Գյումրու կենտրոնական ավտոկայանը Երևանի Հարավային ավտոկայանի հետ: Գյումրիից մեկնումները նախատեսված են ամեն օր՝ ժամը 14:30, 15:45, 17:00 և 18:00, իսկ Երևանից՝ 10:00, 11:15, 12:30 և

	13:30: Ուղևորության տևողությունը շուրջ 2 ժամ 30 րոպե է: Գյումրու համայնքապետարանի կայքում տեղադրված տեղեկատվության համաձայն՝ միկրոավտոբուսային փոխադրումներ իրականացվում են նաև ժամը 07:00–20:00-ն՝ ըստ ուղևորների համալրման, սակայն այդ տվյալների արդիականությունը լրացուցիչ հաստատման կարիք ունի: Երթուղային 358: Երկաթուղային հաղորդակցությունն ապահովում է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն՝ սովորական մերձքաղաքային և արագընթաց էլեկտրագնացքներով: Գործում է նաև №100/101 արագընթաց էլեկտրագնացքը, որի՝ Գյումրիից մեկնելու ժամը 2026 թվականի սեպտեմբերի 25-ից սահմանվել է 17:55:
Ներհամայնքայի ն տրանսպորտը (բոլոր բնակավայրերում առկա)	**Թիվ 12 երթ** սկզբնակետ-Երկ/գծի բանավան , վերջնակետ-Պ. Սևակ փ. **Թիվ 14 երթ** սկզբնակետ-Մսի կոմբինատ, վերջնակետ-Մ. Ավետիսյան փ. **Թիվ 18 երթ** սկզբնակետ-Եղիշե Չարենց փ, վերջնակետ-Հաղթանակի պ **Թիվ 20 երթ** սկզբնակետ-Պ.Սևակ փ , վերջնակետ-Գ.Նժդեհի հրապարակ **Թիվ 22երթ** սկզբնակետ-Ստրոմաշինա գործարան, վերջնակետ-Պ.Սևակ **Թիվ 24երթ** սկզբնակետ-Հաղթանակի պողոտա, վերջնակետ-Ապակու Գործարան **Թիվ 25երթ** սկզբնակետ-մուշ-2-2,վերջնակետ-Ավտոկայարան **Թիվ 26երթ** սկզբնակետ-մուշ-2-2,վերջնակետ-Մայր Հայաստան հուշարձան
Տրանսպորտայի ն կապը հարևան համայնքների հետ	Իրականացվում է հիմնականում ավտոմոբիլային ճանապարհներով՝ ավտոբուսային, միկրոավտոբուսային և անհատական տրանսպորտային միջոցներով:

Աղյուսակ N 4
համայնքի՝ սոցիալական
պատասխանատվության
ուղղությամբ
տնտեսական ներուժի

Համայնքի՝ սոցիալական պատասխանատվության ուղղությամբ տնտեսական ներուժի նկարագիրը	
Միջին և խոշոր ընկերությունները, որոնք ունեն ներուժ սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնելու համար	**Ցանկի լրացման հստակ մենթոդաբանությունը առկա չէ:** Համայնքի տարեկան աշխատանքային պլանը նախատեսում է համագործակցություն ձեռներեցների, բարերարների և մասնավոր գործընկերների հետ:
Սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնող ընկերությունները. Վերջին երեք տարում սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնելու	**Ցանկի լրացման հստակ մենթոդաբանությունը առկա չէ:**

փորձառությամբ ընկերությունները	
Համայնքի հաշվեկշռում առկա չօգտագործվող, սակայն սոցիալական ծրագրերի նպատակով օգտագործման ենթակա շինությունները	-

Աղյուսակ N 5
սոցիալական բնագավառի ծառայությունների

5.1 Առողջապահական և կրթական կազմակերպությունները	**Անվանումը**
Մանկապարտեզները կամ նախադպրոցական ուսումնական հաստատությունները	24 «Լապտերիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Ծիածան-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Թոռնիկ Մանուշակ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Ժպիտ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Արծագանք-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Լիլիթ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Նանուլիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ «Լիանա-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ «Արարատ կրթահամալիր» ՀՈԱԿ «Գոհար-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Փարոս-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Անի պարտեզ մանկապարտեզ» ՀՈԱԿ «Կարմիր գլխարկ մանկապարտեզ» ՀՈԱԿ «Հենզել և Գրետել-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Սուրբ Մարիամ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Գյումրու մանկիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

	«Էյլիթիա-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Ձյունիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Հուսո առագաստ մանկապարտեզ» ՀՈԱԿ «Երազանք մանկապարտեզ» ՀՈԱԿ «Անուլիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ «Ձանգակ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ:
Բժշկական կենտրոնները	1 «Գյումրու բժշկական կենտրոն»
Առողջության առաջնային պահպանման կենտրոնները և ամբուլատորիաները	6 «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» «Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» «Գյումրու Բեռլին պոլիկլինիկա»:
Արտադպրոցական կազմակերպությունները, այդ թվում՝ մշակույթի (արվեստի) դպրոցներ, սպորտդպրոցներ, այլ	9 մշակույթի/արվեստի դպրոց, Ա. Տիգրանյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց 2. Ա. Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց 3. Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց 4. Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց 5. Խ. Ավետիսյանի անվան թիվ 7 երաժշտական դպրոց 6. Ն. Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց 7. Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոց 8. Պարարվեստի դպրոց 9. Մանկապատանեկան արվեստի պալատ 15 սպորտդպրոց, 1. Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց

	2. Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց 3. Աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց 4. Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց 5. Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց 6. Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց 7. Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց 8. Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց 9. Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց 10. Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց 11. Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց 12. Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց 13. Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց 14. Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց 15. Համալիր մանկապատանեկան մարզադպրոց: ընդհանուր՝ 24 արտադպրոցական հաստատություն
Համայնքում բարձրագույն ուսումնական հաստատությունները	6 ԲՈՒՀ 1. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

	2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղ 3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ 4. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ 5. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ 6. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղ:
Համայնքում նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները	**Նախնական մասնագիտական՝** 1. Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան 2. Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան 3. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան: **Միջին մասնագիտական՝** 1. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ 2. Գյումրու պետական տեխնիկական քոլեջ 3. Գյումրու պետական բժշկական քոլեջ 4. Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ 5. Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ 6. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջ 7. Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ
Այլ	

5.2 Սոցիալական պաշտպանության ոլորտում գործող կազմակերպությունները, անհատները և նրանց գործունեության նկարագիրը

Համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրող պետական մարմինները և կազմակերպությունները (ՄՍԾ տարածքային կենտրոն, պետական ոչ առևտրային կազմակերպություն, այլ) և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները՝ ըստ թիրախային խմբերի	«Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ՝ շուրջօրյա լրիվ խնամք 0–18 տարեկան երեխաների համար: «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ՝ շուրջօրյա ճգնաժամային խնամք և ցերեկային սոցիալ-հոգեբանական ծառայություններ երեխաների համար: ՄՍԾ Գյումրու տարածքային կենտրոն՝ սոցիալական ծառայությունների տրամադրում՝ իր լիազորությունների շրջանակում
Սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի	Առկա չէ
Համայնքում պետական դրամաշնորհով սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի	«Խաչմերուկ կրթական խորհրդատվական կենտրոն» հիմնադրամ՝ երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ, «Կանանց իրավունքների տուն» ՀԿ՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցման ծառայություններ: «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ և «Հայկական Կարիտաս» ԲՀԿ՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային և ցերեկային խնամք: Գործում է 3 ցերեկային կենտրոն
Համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրող կամ սոցիալական աջակցության կամ շահապաշտպան ծրագրեր	Գյումրի համայնքում սոցիալական ծառայությունների մատուցման, սոցիալական աջակցության և շահերի պաշտպանության ոլորտներում ակտիվ գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպություններ: «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը սոցիալական աջակցության և խնամքի ծառայություններ է տրամադրում տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց և սոցիալապես անապահով

իրականացնող հասարակական կամ բարեգործական (այդ թվում՝ կրոնական) կազմակերպությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի (նշել նաև, թե արդյոք առկա է համագործակցություն այդ կազմակերպությունների հետ)	ընտանիքներին՝ իրականացնելով նաև համայնքային աջակցության և սոցիալական ներառման ծրագրեր: «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամի «Էմիլի Արեգակ» կենտրոնը ծառայություններ է մատուցում հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին՝ ապահովելով զարգացողական, վերականգնողական, հոգեսոցիալական աջակցություն, ինքնուրույն կյանքի հմտությունների զարգացում և ընտանիքների աջակցություն: Հայկական Կարմիր Խաչի ընկերության Ծիրակի մարզային մասնաճյուղը սոցիալական և մարդասիրական աջակցություն է տրամադրում խոցելի խմբերին, ինչպես նաև Գյումրիում իրականացնում է տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ: «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպությունն աջակցում է ընտանիքում բռնության ենթարկված կանանց՝ տրամադրելով մասնագիտական աջակցություն, խորհրդատվություն և իրականացնելով իրավունքների պաշտպանության ու կանանց հզորացման ծրագրեր: «Արևամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամը երեխաների և ընտանիքների համար իրականացնում է հոգեբանական խորհրդատվության, սոցիալական աշխատանքի և հոգեսոցիալական աջակցության ծրագրեր: «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը զբաղվում է հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանությամբ, մատչելիության, հավասար հնարավորությունների և անկախ կյանքի խթանմամբ, ինչպես նաև շահերի պաշտպանության և հանրային իրազեկման աշխատանքներով: Հայ Առաքելական Եկեղեցու Ծիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնը սոցիալական և բարեգործական աջակցություն է ցուցաբերում անապահով ընտանիքներին, երեխաներին, տարեցներին և սոցիալական այլ խոցելի խմբերին՝ իրականացնելով սոցիալ-կրթական և համայնքային աջակցության ծրագրեր: Գյումրու «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն բարեգործական հիմնադրամը սոցիալապես անապահով բնակչության, ծնողազուրկ երեխաների և միայնակ տարեցների համար իրականացնում է առողջապահական աջակցության ծրագրեր: ՄՄԾ Գյումրու տարածքային կենտրոնին կից հասարակական հիմունքներով գործող տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմում են «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի, «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ի, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «Կամրջակ» սոցիալ- բարեգործական ՀԿ-ի ներկայացուցիչները (իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվությունը ներկայացվել է տարածքային կենտրոնին): Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը միացել է սոցիալական համագործակցության համաձայնագրին:
Համայնքում սոցիալական խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ	-

նախաձեռնությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի (նշել նաև, թե արդյոք առկա է համագործակցություն վերջիններիս հետ)	
Համայնքի բնակիչներին աջակցող անհատ բարերարները, բարեգործական կամ մասնագիտական խմբերը, նրանց գործունեության հիմնական ուղղությունները (նշել նաև, թե արդյոք առկա է համագործակցություն վերջիններիս հետ)	-
Սոցիալական կացարանները կամ բնակարանները (նշել գտնվելու վայրը)	Մ.Խորենացի 46/1

Աղյուսակ N 6
սոցիալական, առողջապահական և կրթական ոլորտների մասնագիտական ներուժը

Ոլորտը	Մասնագետներ	Թվաքանակը (եթե տեղեկատվությունն տեղեկատվությունն առկա է))
Սոցիալական	1. Սոցիալական աշխատող	13 (համալրված՝ 9, թափուր՝ 4)
	2. Սոցիալական սատարող	4 (համալրված՝ 4)
	3. սոցիալական պատրոնաժ իրականացնող մասնագետ	1 (համալրված՝ 1)
	4. սոցիալական խնամք իրականացնող կամ սոցիալական սպասարկման այլ մասնագետ	1 (համալրված՝ 1)
Հոգեբանական	5. Հոգեբան	7
	6. Մանկական հոգեբան	2
	7. Հոգեթերապևտ	2

Բժշկական	8. Վերականգնողաբան	2
	9. Նյարդաբան	2
	10. Հոգեբույժ	3
	11. այլ (նշել)	-
Իրավական	12. Փաստաբան	6
	13. Իրավաբան	8
	14. Իրավախորհրդատու	6
Կրթական-մասնագիտական	15. Կրթական ծրագրերով զբաղվող մասնագետներ, կարիերայի կենտրոնների, մասնագիտական կողմնորոշման գծով մասնագետներ և այլ (օրինակ՝ քոլեջներում և ՄՍՃ տարածքային կենտրոններում, այլ)	3
Հարբժշկական	16. Կինեզիոլոգ	2
	17. Էրգոթերապիստ	2
	18. Օրթեզիստ	1
	19. Պրոթեզիստ	1
	20. Լոգոպեդ	8
	21. Հատուկ մանկավարժ	4
	22. Սուրդոմանկավարժ	1
	23. Տիֆլոմանկավարժ	0
	24. Արտ-թերապիստ	4
	25. Խաղաթերապիստ	2
	26. Դիաբետի դպրոցի մասնագետ	1

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Գյումրի համայնքի սոցիալական կարիքների գնահատման արդյունքները

Գյումրի համայնքի սոցիալական կարիքների գնահատումն իրականացվել է փաստաթղթային վերլուծության, ֆոկուս-խմբային քննարկումների և փորձագիտական հարցազրույցների միջոցով:

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ համայնքի սոցիալական խնդիրները պայմանավորված են ոչ միայն նյութական անապահովությամբ, այլև սոցիալական ծառայությունների սահմանափակ ծավալով և բազմազանությամբ, դրանց հասանելիության, շարունակականության ու արդյունավետության խնդիրներով, ինչպես նաև տարբեր կառույցների կողմից իրականացվող ծրագրերի ոչ բավարար համակարգմամբ:

Գնահատման արդյունքում առանձնացվել են համայնքի հետևյալ հիմնական սոցիալական կարիքները:

Աղյուսակ N 7
համայնքի սոցիալական կարիքների և ռեսուրսների գնահատման արդյունքների

h/h	Համայնքի բացահայտված սոցիալական կարիքները[2]՝ ըստ տարբեր խմբերի (ըստ անհրաժեշտության ավելացնել տողեր)	Ռեսուրսը
1.	Բնաիրային աջակցության կարիք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և նրանց ընտանիքների համար ***(առաջնահերթության 9 միավոր)***	Համայնքապետարան, ՄՄԾ Գյումրու տարածքային կենտրոն, համայնքում գործող հասարակական կազմակերպություններ,
2.	Կացարանային ապահովման աջակցություն՝ վարձավճարների փոխհատուցման միջոցով (այդ թվում՝ կոմունալ վարձավճարների)՝ անօթևանության առաջ կանգնած բնակիչների համար ***(առաջնահերթության 9 միավոր)***	Համայնքապետարան
3.	Զբաղվածության խթանում և տնտեսական ակտիվացման ծրագրերի խթանում համայնքում ***(առաջնահերթության 9 միավոր)***	ՄՄԾ տարածքային կենտրոնի զբաղվածության գործառույթներ, համայնքապետարանի ծրագրարի պատասխանատուների, համայնքում գործող կրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններ, կարիերայի և մասնագիտական կողմնորոշման մասնագետներ, տեղական գործատուներ և բիզնես հատված:
4.	Արժանապատիվ տեղափոխման աջակցություն այդ թվում ճանապարհածախսի փոխհատուցման միջոցով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և նրանց ընտանիքների համար ***(առաջնահերթության 8 միավոր)***	Համայնքապետարան
5	Համայնքում առկա սոցիալական ծառայությունների համակարգում և ուղղորդում ***(առաջնահերթության 8 միավոր)***	Համայնքապետարան, ՄՄԾ Գյումրու տարածքային կենտրոն, սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակում գործող համակարգող խորհուրդ, համայնքում գործող հասարակական կազմակերպություններ,
6	Երեխաների զարգացման, պաշտպանության և ընտանիքներին աջակցության ծառայություն ***(առաջնահերթության 6 միավոր)***	Համայնքապետարան, ՄՄԾ Գյումրու տարածքային կենտրոն, համայնքում գործող

[2] Կարիքները նշված են ըստ առաջնահերթության, որը որոշվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված աշխատանքային խմբի՝ բաց քվեարկության արդյունքում

		հասարակական կազմակերպություններ,
7	Հոգեկան առողջության համայնքահենք ծառայություններ ***(առաջնահերթության 6 միավոր)***	Համայնքապետարան, հոգեկան առողջության ծառայություններ մատուցողներ
8	Խնամք և սոցիալական սպասարկում ՝ տնային պայմաններում և ցերեկային կենտրոնում ***(առաջնահերթության 5միավոր)***	Համայնքապետարան, ՄՄԾ Գյումրու տարածքային կենտրոն, համայնքում գործող հասարակական կազմակերպություններ,
9	Անկախ կյանքի և սոցիալական վերականգնման ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար ***(առաջնահերթության 5 միավոր)***	Համայնքապետարան, Համայնքում գործող հաշմանդամության հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ
10	Սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական ծառայությունների աջակցություն ***(առաջնահերթության 5 միավոր)***	Համայնքում գործող հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, իրավական և խորհրդատվական ծառայություններ մատուցող պետական ու հասարակական կազմակերպություններ:
11	**Համակարգային ևուղեկցող կարիքներ, որոնք ոչ ուղղակի կապված են սոցիալական ծրագրով սահմանված կարիքների բավարարմանը**	
11.1	Բնակչության՝ սոցիալական իրավունքների և ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման կարիք:	Համայնքապետարանի և ՄՄԾ տարածքային կենտրոնի տեղեկատվական ռեսուրսներ, համայնքային պաշտոնական հարթակներ, սոցիալական ծառայություններ մատուցող պետական և հասարակական կազմակերպություններ
11.2	Սոցիալական ծառայությունների ոլորտի մասնագետների վերապատրաստման և բազմամասնագիտական համագործակցության զարգացման կարիք:	Մասնագիտական կազմակերպություններ

Աղյուսակ N 8
ՍՈՒՈՐ (SWOT) վերլուծության
վերլուծության արդյունքների

Ս - ուժեղ կողմերը կամ ներքին ռեսուրսները	**ՈՒ - թույլ կողմերը կամ կարիքները**
• Համայնքում պետական, համայնքային և հասարակական հատվածների սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների առկայություն: • Կրթական, մշակութային, առողջապահական և սոցիալական հաստատությունների առկայություն:	• Սոցիալական ծառայությունների ընդհանուր ծավալի և բազմազանության անբավարարություն: • Առկա սոցիալական ծառայությունների ոչ բավարար համակարգվածություն և շարունակականություն: • Ծառայությունների միջև ուղղորդման, դեպքերի կառավարման և համագործակցության

• Նախադպրոցական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների առկայություն: • Համայնքում սոցիալական աշխատողների, հոգեբանների, բժշկական և հարբժշկական մասնագետների որոշ թվով առկայություն: • Հոգեկան առողջության ոլորտում մասնագիտացված ծառայություններ մատուցող կառույցի և այլ առողջապահական հաստատությունների առկայություն: • Գործուն հասարակական և բարեգործական կազմակերպությունների առկայություն և սոցիալական ծրագրերի իրականացման փորձ: • Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից նորարարական և թիրախային ծրագրերի իրականացման փորձ: • Առկա տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքներ՝ երկաթուղային, ավտոճանապարհային և ներհամայնքային տրանսպորտային կապ: • Զարգացած հյուրանոցային և հյուրատնային ցանց և սպասարկման ոլորտի մարդկային ներուժ: • Գործող SS կենտրոնների, տեխնոլոգիական լաբորատորիաների և ինովացիոն հարթակների առկայություն: • Զբոսաշրջության զարգացման ներուժ՝ պատմամշակութային ժառանգության, արվեստի և մշակութային կենտրոնների շնորհիվ: • Համայնքի սոցիալական կարիքների և ռեսուրսների գնահատման, շահագրգիռ կողմերի ներգրավման և մասնակցային ծրագրավորման փորձի առկայություն:	միասնական մեխանիզմների թերզարգացած լինելը: • Բնակչության՝ սոցիալական իրավունքների, ծառայությունների և աջակցության հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության անբավարար մակարդակ: • Սոցիալական աշխատողների և սոցիալական սպասարկման այլ մասնագետների թվի սահմանափակություն: • Էրգոթերապիստների, վարքային թերապիստների, հատուկ մանկավարժների, ադապտիվ ֆիզկուլտուրայի, տարածական կողմնորոշման և այլ նեղ մասնագետների պակաս: • Աշխատատեղերի պակաս և աշխատանք փնտրող որոշ խմբերի՝ աշխատաշուկայում ցածր մրցունակություն: • Հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երիտասարդների և այլ խոցելի խմբերի զբաղվածության սահմանափակ հնարավորություններ: • Տնտեսական աճի դանդաղ տեմպեր և ներդրումների սահմանափակ ներհոսք: • Տեղական արտադրությունների, սոցիալական ձեռնարկատիրության և տնտեսական ակտիվացման ծրագրերի ոչ բավարար զարգացում: • Ենթակառուցվածքների ոչ համաչափ զարգացում և առանձին թաղամասերում ծառայությունների հասանելիության խնդիրներ: • Բնակարանային անապահովություն, անմխիթար և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների առկայություն: • Երկրաշարժի հետևանքներով և հետագա մաշվածությամբ պայմանավորված վթարային կամ ոչ բավարար բնակարանային պայմանների առկայություն: • ՔՀԿ-ների մի շարք ծրագրերի կարճաժամկետ բնույթ և ծառայությունների շարունակականության սահմանափակում: • Սոցիալական ոլորտում աշխատողների հոսունության և մասնագետների պահպանման խնդիրներ:
Օ - հնարավորությունները կամ արտաքին ռեսուրսները • Պետական պատվերի, դրամաշնորհային ծրագրերի, սուբվենցիոն և այլ ֆինանսավորման մեխանիզմների օգտագործման հնարավորություն: • Միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության և ծրագրային ու ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորություն:	**Թ - սպառնալիքները կամ արտաքին վտանգները** • Հասարակական կարծրատիպեր, որոնք կարող են խոչընդոտել որոշ խմբերի սոցիալական ներառմանը: • Գների աճ և բնակչության գնողունակության նվազում, որը կարող է խորացնել սոցիալական խոցելիությունն ու անհավասարությունը:

• Համայնք–պետություն–ՔՀԿ գործընկերության ընդլայնման և սոցիալական ծառայությունների պատվիրակման հնարավորություն՝ ՏԻՄ առաջնորդության պահպանմամբ: • Գործող հասարակական կազմակերպությունների մասնագիտական և ծրագրային ներուժի առավել արդյունավետ օգտագործման հնարավորություն: • Համայնքահենք համալիր սոցիալական ծառայությունների ստեղծման և զարգացման հնարավորություն: • Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման և խոցելի իրավիճակում գտնվող անձանց զբաղվածության ապահովման հնարավորություն: • Միասնական ուղղորդման և դեպքերի կառավարման համակարգի ներդրման հնարավորություն: • Մասնագետների կարողությունների զարգացման և բազմամասնագիտական աշխատանքի նոր մոդելների ներդրման հնարավորություն: • Բնակչության իրազեկման ծրագրերի և թվային տեղեկատվական ու ուղղորդման հարթակների զարգացման հնարավորություն: • Արտերկրի և Հայաստանի այլ համայնքների հաջող փորձի կիրառման հնարավորություն համայնքային սոցիալական ծառայությունների կազմակերպման ոլորտում: • Գյումրու՝ որպես տարածաշրջանային կրթական, մշակութային, տեխնոլոգիական և ծառայությունների կենտրոնի ներուժի օգտագործման հնարավորություն: • Մասնավոր հատվածի և սոցիալական պատասխանատվության ծրագրերի ներգրավման հնարավորություն սոցիալական նախաձեռնություններում:	• Տնտեսական անկայունության կամ տնտեսական աճի դանդաղման հետևանքով սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների թվի աճ: • Գործազրկության և երկարաժամկետ չզբաղվածության խորացման վտանգ: • Արտագաղթի շարունակություն, հատկապես երիտասարդների և մասնագետների շրջանում: • Սոցիալական ոլորտի որակավորված մասնագետների արտահոսք և մարդկային ռեսուրսների նվազում: • Սոցիալապես անապահով ընտանիքների թվի աճի վտանգ: • Բնակարանային խնդիրների և անբավարար կացարանային պայմանների շարունակականության հետևանքով սոցիալական խնդիրների խորացում: • Ներդրումների անբավարար մակարդակի պահպանման հետևանքով զբաղվածության և տնտեսական ակտիվացման հնարավորությունների սահմանափակում: • Պետական կամ արտաքին ֆինանսավորման կրճատման դեպքում սոցիալական ծառայությունների ծավալի և շարունակականության վտանգ: • Արտաքին կամ դրամաշնորհային ֆինանսավորումից չափազանց մեծ կախվածության ձևավորում: • Ծառայությունների պահանջարկի աճ՝ առանց ֆինանսական և մարդկային ռեսուրսների համաչափ ավելացման: • Արտակարգ, ռազմական կամ այլ ճգնաժամային իրավիճակների դեպքում սոցիալական ծառայությունների նկատմամբ պահանջարկի կտրուկ աճ: • Համայնքում գործող ծառայությունների հատվածականության պահպանման դեպքում անձանց և ընտանիքների կարիքների ոչ ամբողջական լուծման վտանգ: • Գործող ՔՀԿ և այլ ծրագրերի ֆինանսավորման ավարտից հետո որոշ ծառայությունների դադարեցման վտանգ:

2.2. Տեսլականը և նպատակները

ՏԵՍԼԱԿԱՆ

Գյումրի համայնքում ձևավորել սոցիալական ծառայությունների համակարգված, հասանելի և արդյունավետ ցանց, որը հիմնված է բնակչության իրական կարիքների վրա՝ կենսական ու առաջնային կարիքների բավարարման պատասխանատու մեխանզիմների ներդրումից մինչև եղած ներուժի զարգացում և ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում

հայտնված անձանց համար անհրաժեշտ աջակցություն: Այն միտված է համայնքում սոցիալական խնդիրների համակարգային լուծմանը՝ ապահովելով ծառայությունների շարունակականություն, տարբեր կառույցների համագործակցություն և համայնքային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ինչը նպաստում է բնակչության կյանքի որակի բարելավմանը և սոցիալական ռիսկերի նվազեցմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

Գյումրի համայնքում իրականացված կարիքների և ռեսուրսների գնահատման արդյունքների[3] հիման վրա սահմանվում են հետևյալ նպատակները՝ ուղղված բնակիչների առանահերթ կարիքների բավարարմանը, բացահայտված ծառայությունների բացերի հաղթահարմանը, ծառայությունների հասանելիությանը, մատչելիությանը, շարունակականությանը և արդյունավետության բարձրացմանը.

1. Բնաիրային աջակցության տրամադրում և դրա հասցեականության և արդյունավետության բարձրացում

Գնահատման արդյունքները ցույց են տվել, որ սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին տրամադրվող աջակցությունը ոչ բոլոր դեպքերում է ապահովում նրանց առաջնային կենսական կարիքների բավարարումը, իսկ կարիքների անհատական գնահատման վրա հիմնված բնաիրային աջակցության կիրառումը սահմանափակ է:

Նպատակն է զարգացնել կարիքահեն, հասցեական և վերահսկելի բնաիրային աջակցության մեխանիզմներ՝ դրանք հնարավորության դեպքում համադրելով ընտանիքի սոցիալական վիճակի կայունացմանն ուղղված ծառայությունների հետ:

2. Կացարանային և բնակարանային աջակցության համակարգի զարգացում

Գնահատումը ցույց է տվել, որ համայնքում առկա են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին ժամանակավոր կամ երկարատև կացարանով ապահովման, տնային պայմանների բարելավման և բնակելի միջավայրի հարմարեցման խնդիրներ:

Նպատակն է զարգացնել ժամանակավոր և մշտական կացարանի և սոցիալական բնակարանային աջակցության մեխանիզմները, ինչպես նաև նպաստել բնակարանային ու կենցաղային պայմանների բարելավմանը և բնակելի միջավայրի մատչելիության ապահովմանը:

3. Զբաղվածության խթանման և տնտեսական ակտիվացման ծառայությունների զարգացում

Գնահատմամբ արձանագրվել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց, զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ձեռք բերած

[3] https://docs.google.com/document/d/1RxRV-ca21EckalE-A-_d5PGUXwCeCxWg/edit?usp=sharing&ouid=116262136740991306706&rtpof=true&sd=true

անձանց, կանանց, երիտասարդների և աշխատաշուկայում անմրցունակ այլ անձանց համար սահմանափակ են զբաղվածության խթանման և տնտեսական ակտիվացման ծառայությունները:

Նպատակն է զարգացնել մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստման, վերամասնագիտացման, մասնագիտական վերականգնման, աշխատանքի տեղավորման ուղեկցման, աշխատավայրում հարմարման, ինքնազբաղվածության և եկամուտ ստեղծող, այդ թվում՝ սոցիալական ձեռնարկատիրության գործունեության աջակցության ծառայությունները:

4. Տեղափոխման աջակցության ծառայությունների հասանելիության բարձրացում

Գնահատմամբ արձանագրվել է, որ տարեց, հաշմանդամություն ունեցող, տեղաշարժվելու դժվարություններ կամ առողջական խնդիրներ ունեցող անձանց համար սահմանափակ են սոցիալական, առողջապահական, կրթական և այլ ծառայություններից օգտվելու նպատակով տեղափոխման և ուղեկցման աջակցության հնարավորությունները:

Նպատակն է զարգացնել տեղափոխման և ուղեկցման ծառայություններ՝ նպաստելով համայնքում գործող ծառայությունների փաստացի հասանելիությանը:

5. Սոցիալական ծառայությունների համակարգման և ուղղորդման միասնական համակարգի ձևավորում

Գնահատմամբ արձանագրվել է, որ համայնքում գործող ծրագրերի ու ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակումը, դեպքերի ուղղորդումը և գործողությունների համակարգումը բավարար մակարդակի վրա չեն:

Նպատակն է ձևավորել ծառայությունների համակարգման, տեղեկատվության փոխանակման, դեպքերի ուղղորդման և հետադարձ կապի միասնական համակարգ՝ պետական, համայնքային և ոչ պետական կառույցների համագործակցության հիման վրա:

6. Երեխաների զարգացման, վերականգնման և ընտանիքակենտրոն ծառայությունների զարգացում

Գնահատմամբ արձանագրվել են զարգացման, տարիքային, վարքային, հաղորդակցման և հոգեբանական առանձնահատկություններ ունեցող երեխաներին ու նրանց ընտանիքներին տրամադրվող շարունակական և բազմամասնագիտական ծառայությունների բացեր:

Նպատակն է զարգացնել վաղ միջամտության, զարգացման, սոցիալական վերականգնման, վարքային և հոգեբանական աջակցության ընտանիքակենտրոն ծառայություններ՝ ներառելով նաև ծնողների և խնամողների խորհրդատվությունն ու աջակցությունը:

7. Հոգեկան առողջության համայնքահենք ծառայությունների զարգացում

Գնահատումը ցույց է տվել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար համայնքահեն մասնագիտացված սոցիալական և հոգեսոցիալական ծառայությունները գրեթե բացակայում են, իսկ աջակցության առկա համակարգը հիմնականում հենվում է զուտ հոգեբուժական օգնության վրա:

Նպատակն է զարգացնել հոգեկան առողջության կանխարգելման, վաղ հայտնաբերման, ճգնաժամային արձագանքման, հոգեսոցիալական վերականգնման, ընտանիքի աջակցության, զբաղվածության և համայնքային ներառման համայնքահեն ծառայությունները:

8. Տնային խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների ընդլայնում

Գնահատումը ցույց է տվել, որ տնային խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների ծավալն ու հասանելիությունը բավարար չեն հատկապես միայնակ բնակվող տարեցների, հաշմանդամություն ունեցող և խնամքի կարիք ունեցող անձանց, երեխաների ու նրանց ընտանիքների համար:

Նպատակն է ընդլայնել տնային և ցերեկային խնամքի, կենցաղային աջակցության, սոցիալական ակտիվացման և բազմաֆունկցիոնալ խնամքի ծառայությունների ծավալն ու հասանելիությունը՝ ապահովելով դրանց շարունակականությունը:

9. Անկախ կյանքի և սոցիալական վերականգնման ծառայությունների զարգացում

Գնահատումը ցույց է տվել, որ համայնքում սակավաթիվ են հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես՝ երիտասարդների, անկախ կյանքի և համայնքային կյանքում մասնակցությանը նպաստող ծառայությունները:

Նպատակն է զարգացնել անկախ կյանքի և սոցիալական վերականգնման ծառայություններ՝ ուղղված առօրյա կյանքի հմտությունների, ինքնուրույնության, սոցիալական հաղորդակցման և համայնքային մասնակցության զարգացմանը:

10. Սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական ծառայությունների ընդլայնում

Գնահատմամբ արձանագրվել է, որ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձանց և ընտանիքներին տրամադրվող սոցիալ-հոգեբանական, սոցիալական, իրավական և այլ խորհրդատվական ծառայությունները բավարար չեն, իսկ դրանց մի մասը չունի շարունակական բնույթ:

Նպատակն է ընդլայնել անհատական, ընտանեկան և խմբային խորհրդատվության, ճգնաժամային միջամտության, ծնողական աջակցության, իրավական խորհրդատվության և սոցիալական դեպքի ուղեկցման ծառայությունների հասանելիությունն ու շարունակականությունը:

11. Բնակչության՝ սոցիալական իրավունքների և ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում

Գնահատմամբ արձանագրվել է, որ բնակիչների մի մասը բավարար տեղեկացված չէ իր սոցիալական իրավունքների, առկա ծառայությունների և դրանցից օգտվելու ընթացակարգերի մասին:

Նպատակն է զարգացնել բնակչության իրազեկման, տեղեկատվության տրամադրման և խորհրդատվության մեխանիզմները՝ ապահովելով սոցիալական իրավունքների, գործող ծառայությունների և դրանցից օգտվելու ընթացակարգերի վերաբերյալ հասանելի և հասկանալի տեղեկատվություն:

12. Սոցիալական ծառայությունների մատուցման մասնագիտական ներուժի զարգացում

Գնահատմամբ արձանագրվել է սոցիալական, վերականգնողական և հոգեսոցիալական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որոշ մասնագետների, այդ թվում՝ էրգոթերապիստների, վարքային մասնագետների, հատուկ մանկավարժների, ադապտիվ ֆիզիկական ակտիվության, տարածական կողմնորոշման և հարբժշկական այլ մասնագետների պակաս:

Նպատակն է զարգացնել համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող մասնագետների կարողությունները, ընդլայնել անհրաժեշտ մասնագետների ներգրավումը և ձևավորել բազմամասնագիտական աշխատանքի կարողություններ:

Աղյուսակ N 9
կարիքների և նպատակների ծառի

Նշել կարիքը	Նկարագրել դրա հետևանքները, բնակիչների կամ առանձին խմբերի կենսագործունեության վրա ունեցած ազդեցությունը	Մեկնաբանել պատճառները	Ներկայացնել կարիքի բավարարման հիմնական ուղիները
1. Բնաիրային աջակցության կարիք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և նրանց ընտանիքների համար	Ընտանիքների սոցիալական վիճակի վատթարացում, նյութական ծանրաբեռնվածության և սոցիալական խնդիրների խորացման ռիսկ:	Եկամուտների անբավարարություն, աղքատություն, առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացում, առկա աջակցության սահմանափակ ծավալ և հաճախ միանվագ բնույթ:	Կարիքահեն և հասցեական բնաիրային աջակցության մեխանիզմների ներդրում՝ սննդի, հագուստի, վառելափայտի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների հասանելիության ապահովմամբ, այդ թվում՝ փոխհատուցման կամ վկայագրի մեխանիզմով:
2. Կացարանային ապահովման աջակցություն՝ վարձավճարների փոխհատուցման միջոցով, այդ թվում՝ կոմունալ վարձավճարների, անօթևանության առաջ կանգնած բնակիչների համար	Անօթևանության կամ կացարանի կորստի ռիսկ, ոչ բավարար բնակարանային պայմաններում երկարատև բնակություն, առողջական, հոգեբանական և սոցիալական խնդիրների խորացում:	Բնակարանային անապահովություն, ժամանակավոր կամ ոչ բավարար պայմաններում բնակություն, կայուն բնակարան ձեռք բերելու կամ վարձավճարը և կոմունալ ծախսերը հոգալու ֆինանսական դժվարություններ:	Բնակվարձի և անհրաժեշտության դեպքում կոմունալ ծախսերի փոխհատուցման հասցեական մեխանիզմների ներդրում, սոցիալական բնակարանային ծրագրերի զարգացում, բնակարանային պայմանների բարելավման և անօթևանության կանխարգելման միջոցառումներ:
3. Զբաղվածության խթանում և տնտեսական ակտիվացման ծրագրերի խթանում համայնքում	Երկարատև գործազրկություն, եկամուտների նվազում, աղքատության խորացում, աշխատաշուկայից դուրս մնալու և արտագաղթի ռիսկ:	Աշխատատեղերի սահմանափակություն, աշխատաշուկայում որոշ խմբերի ցածր մրցունակություն, վերապատրաստման և վերամասնագիտացման հնարավորությունների պակաս, զբաղվածության աջակցության ծառայությունների սահմանափակություն:	Մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստման, վերամասնագիտացման, մասնագիտական վերականգնման, աշխատանքի տեղավորման ուղեկցման, աջակցվող զբաղվածության, ինքնազբաղվածության և սոցիալական ձեռնարկատիրության ծրագրերի զարգացում:
4. Արժանապատիվ տեղափոխման աջակցություն, այդ թվում՝ ճանապարհածախսի փոխհատուցման միջոցով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և նրանց ընտանիքների համար	Սոցիալական, առողջապահական, կրթական և այլ անհրաժեշտ ծառայություններից չօգտվելու կամ ուշ օգտվելու ռիսկ, սոցիալական մեկուսացում և համայնքային կյանքում մասնակցության սահմանափակում:	Տրանսպորտային ծախսերի բեռ, հասանելի և հարմարեցված փոխադրումների սահմանափակություն, շարժունակության դժվարություններ և որոշ ծառայությունների տարածքային հեռավորություն:	Ճանապարհածախսի փոխհատուցման մեխանիզմների ներդրում, սոցիալական տաքսու և հարմարեցված փոխադրումների զարգացում, անհրաժեշտության դեպքում ուղեկցման ծառայությունների կազմակերպում:

5. Համայնքում առկա սոցիալական ծառայությունների համակարգում և ուղղորդում	Շահառուների կողմից անհրաժեշտ ծառայություններին չհասնելու կամ ուշ հասնելու ռիսկ, աջակցության հատվածականություն, տարբեր կառույցների կողմից գործողությունների կրկնություն և կարիքների ոչ ամբողջական լուծում:	Ծառայությունների միջև թույլ կապ, տեղեկատվության փոխանակման և ուղղորդման հստակ մեխանիզմների պակաս, դեպքերի կառավարման միասնական մոտեցման բացակայություն:	Ծառայությունների քարտեզագրում և ռեեստր, միասնական ուղղորդման և դեպքերի կառավարման մեխանիզմների ներդրում, պետական, համայնքային և ոչ պետական կառույցների համագործակցության ընթացակարգերի զարգացում:
6. Երեխաների զարգացման, պաշտպանության և ընտանիքներին աջակցության ծառայություն	Երեխայի զարգացման դժվարությունների խորացում, կրթական և սոցիալական մասնակցության սահմանափակում, ընտանիքի խնամքի բեռի ավելացում և ընտանեկան ճգնաժամերի ռիսկ:	Վաղ աջակցության, զարգացման, հոգեբանական և սոցիալական ծառայությունների սահմանափակ հասանելիություն, բազմամասնագիտական և ընտանիքակենտրոն ծառայությունների բացեր:	Վաղ միջամտության, զարգացման, սոցիալական վերականգնման, վարքային և հոգեբանական աջակցության ընտանիքակենտրոն ծառայությունների զարգացում, ծնողների և խնամողների խորհրդատվություն և բազմամասնագիտական աշխատանք:
7. Հոգեկան առողջության համայնքահենք ծառայություններ	Հոգեկան առողջության խնդիրների խորացում, սոցիալական մեկուսացում, ընտանիքի ծանրաբեռնվածության աճ, համայնքային մասնակցության նվազում և հիվանդանոցային ծառայություններից կախվածության բարձրացում:	Ծառայությունների կենտրոնացում հիմնականում մասնագիտացված բժշկական հաստատության շուրջ, համայնքահեն սոցիալական և հոգեսոցիալական ծառայությունների պակաս, ծառայությունների սահմանափակ ծավալ և շարունակականության խնդիրներ:	Հոգեկան առողջության կանխարգելման, վաղ հայտնաբերման, ճգնաժամային արձագանքման, հոգեսոցիալական վերականգնման, ընտանիքի աջակցության, զբաղվածության և համայնքային ներառման համայնքահեն ծառայությունների զարգացում:
8. Խնամք և սոցիալական սպասարկում՝ տնային պայմաններում և ցերեկային կենտրոնում	Ինքնուրույն կյանքի հնարավորությունների նվազում, սոցիալական մեկուսացում, ընտանիքի խնամքի ծանրաբեռնվածության աճ և շուրջօրյա խնամքի անհրաժեշտության մեծացման ռիսկ:	Տնային խնամքի և ցերեկային ծառայությունների սահմանափակ ծավալ, միայնակ բնակվող տարեցների և խնամքի կարիք ունեցող անձանց աճող պահանջարկ, ծառայությունների ոչ բավարար ծածկույթ:	Տնային խնամքի, ցերեկային սպասարկման, կենցաղային աջակցության և սոցիալական ակտիվացման ծառայությունների ընդլայնում, խնամողների աջակցություն և ծառայությունների շարունակականության ապահովում:
9. Անկախ կյանքի և սոցիալական վերականգնման ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար	Ինքնուրույնության սահմանափակում, ընտանիքից կախվածության աճ, կրթության, աշխատանքի և համայնքային կյանքին մասնակցության նվազում, սոցիալական մեկուսացում:	Անկախ կյանքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների սակավություն, նեղ մասնագետների պակաս, միջավայրային և հաղորդակցական խոչընդոտներ:	Անկախ կյանքի և սոցիալական վերականգնման ծառայությունների զարգացում՝ առօրյա կյանքի հմտություններ, աջակցող միջոցների օգտագործում, այլընտրանքային հաղորդակցություն, կողմնորոշում և շարժունակություն, բնակարանի և աշխատավայրի հարմարեցում,

			փոխօգնության խմբեր և համայնքային մասնակցության աջակցություն:
10. Սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական ծառայությունների աջակցություն	Հոգեբանական դժվարությունների խորացում, ընտանեկան և սոցիալական հարաբերությունների վատթարացում, ճգնաժամային իրավիճակների երկարաձգում և սոցիալական մեկուսացում:	Սոցիալ-հոգեբանական, սոցիալական, իրավական և այլ խորհրդատվական ծառայությունների սահմանափակ ծավալ, ոչ համակարգվածություն և շարունակականության պակաս:	Անհատական, ընտանեկան և խմբային խորհրդատվության, ճգնաժամային միջամտության, ծնողական աջակցության, իրավական խորհրդատվության և սոցիալական դեպքի ուղեկցման ծառայությունների ընդլայնում:
11. Բնակչության՝ սոցիալական իրավունքների և ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման կարիք	Բնակիչները կարող են չօգտվել իրենց հասանելի իրավունքներից և ծառայություններից, ուշ դիմել աջակցության կամ սխալ ուղղորդվել:	Սոցիալական իրավունքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության ցրվածություն, միասնական տեղեկատվական և ուղղորդման հարթակի պակաս, իրազեկման ոչ բավարար աշխատանք:	Պարբերական իրազեկման ծրագրեր, պարզ և մատչելի տեղեկատվական նյութեր, համայնքային և թվային տեղեկատվական հարթակներ, ծառայությունների քարտեզ և բնակիչների համար խորհրդատվության ու ուղղորդման հասանելի մեխանիզմներ:
12. Սոցիալական ծառայությունների ոլորտի մասնագետների վերապատրաստման և բազմամասնագիտական համագործակցության զարգացման կարիք	Ծառայությունների որակի և շարունակականության նվազում, բարդ դեպքերին ոչ ամբողջական արձագանք, մասնագետների միջև աշխատանքի կրկնություն կամ բացեր և շահառուի կարիքների հատվածական լուծում:	Որոշ մասնագետների պակաս, շարունակական մասնագիտական վերապատրաստման սահմանափակ հնարավորություններ, բազմամասնագիտական թիմային աշխատանքի և համագործակցության ոչ բավարար զարգացում:	Շարունակական մասնագիտական վերապատրաստումներ, բազմամասնագիտական թիմերի զարգացում, մասնագետների ռեեստր և համագործակցության հարթակ, համատեղ դեպքերի քննարկումներ, մեթոդական աջակցություն և մասնագիտական սուպերվիզիա:

2.3. Թիրախային խումբը

Ծրագրի հիմնական թիրախային խմբերն են՝

- սոցիալապես անապահով և ցածր եկամուտ ունեցող անձինք և ընտանիքները,
- կացարանի կորստի կամ անօթևանության ռիսկի առջև կանգնած անձինք և ընտանիքները,
- անբավարար կամ ոչ անվտանգ բնակարանային պայմաններում ապրող անձինք և ընտանիքները,
- գործազուրկ և աշխատաշուկայում անմրցունակ անձինք,
- հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ անկախ կյանքի, սոցիալական վերականգնման, զբաղվածության և տեղափոխման աջակցության կարիք ունեցող անձինք,
- հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների անդամները և խնամողները,
- տարեց անձինք, հատկապես՝ միայնակ բնակվող և խնամքի կամ սոցիալական սպասարկման կարիք ունեցող անձինք,
- երեխաներ, այդ թվում՝ զարգացման, վարքային, հաղորդակցման, հոգեբանական կամ սոցիալական աջակցության կարիք ունեցող երեխաները,
- երեխաներ ունեցող ընտանիքներ, որոնք ունեն ծնողական, սոցիալական, հոգեբանական կամ այլ աջակցության կարիք,
- միայնակ ծնող ունեցող ընտանիքներ,
- բազմազավակ ընտանիքներ,
- հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք և նրանց ընտանիքները,
- սոցիալ-հոգեբանական, իրավական կամ այլ խորհրդատվական աջակցության կարիք ունեցող անձինք և ընտանիքները,
- տեղահանված, փախստական և այլ միգրացիոն կամ ճգնաժամային իրավիճակների հետևանքով սոցիալական դժվարությունների հանդիպող անձինք և ընտանիքները,
- սոցիալական, առողջապահական, կրթական կամ այլ ծառայություններից օգտվելու համար տեղափոխման աջակցության կարիք ունեցող անձինք,
- սոցիալական իրավունքների, գործող ծառայությունների և դրանցից օգտվելու ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության և ուղղորդման կարիք ունեցող բնակիչները:

Ծրագրի առանձին միջոցառումների թիրախային խմբերը և շահառուների ընտրության չափանիշները սահմանվում են համապատասխան ենթածրագրերով և համայնքի ավագանու որոշումներով:

Ծրագրի իրականացման անուղղակի շահառուներն են նաև թիրախային խմբերի ընտանիքի անդամները և խնամողները, սոցիալական ծառայություններ մատուցող պետական, համայնքային և ոչ պետական կառույցների աշխատակիցները, սոցիալական, հոգեբանական, առողջապահական, կրթական և վերականգնողական ոլորտների մասնագետները, ինչպես նաև ծրագրերի իրականացմանը ներգրավվող գործատուները և գործընկեր կազմակերպությունները:

Ծրագրի իրականացումը կնպաստի ոչ միայն առանձին շահառուների կարիքների բավարարմանը, այլև նրանց ընտանիքների խնամքի և սոցիալական բեռի նվազեցմանը, անհրաժեշտ ծառայությունների հասանելիության բարձրացմանը, սոցիալական մեկուսացման կանխարգելմանը, ինքնուրույնության, զբաղվածության և համայնքային կյանքին մասնակցության հնարավորությունների ընդլայնմանը:

Համայնքային մակարդակում ակնկալվում է սոցիալական ծառայությունների միջև համագործակցության և ուղղորդման մեխանիզմների բարելավում, առկա մասնագիտական և կազմակերպական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, ծառայությունների շարունակականության և հասանելիության բարձրացում, ինչպես նաև սոցիալական ներառման և բնակիչների սոցիալ-տնտեսական ակտիվության խթանում:

2.4. Առաջարկները

Գյումրի համայնքում իրականացված սոցիալական կարիքների և ռեսուրսների գնահատման արդյունքների հիման վրա համայնքային սոցիալական ծրագրի նպատակների իրականացման համար առաջարկվում է առանձին կամ համալիր ձևաչափով իրականացնել հետևյալ գործողությունները: Ծառայությունները կարող են կազմակերպվել համայնքի կողմից, պատվիրակվել համապատասխան կազմակերպություններին կամ իրականացվել համայնք–պետական կառույցներ–ՔՀԿ համագործակցությամբ՝ պահպանելով համայնքի համակարգող և վերահսկող դերը:

1. Բնաիրային աջակցության հասցեական մեխանիզմների զարգացում

Առաջարկվում է՝

- ներդնել կարիքների անհատական գնահատման վրա հիմնված բնաիրային աջակցության մեխանիզմներ,
- սահմանել շահառուների ընտրության և աջակցության տրամադրման հստակ չափանիշներ,
- կիրառել քարտային, վկայագրային կամ աջակցության այլ վերահսկելի ձևաչափեր,
- տրամադրել նպատակային աջակցություն սննդի, դեղորայքի, հիգիենայի պարագաների, վառելիքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ձեռքբերման համար,
- բնաիրային աջակցությունը հնարավորության դեպքում համադրել ընտանիքի սոցիալական վիճակի կայունացմանն ուղղված այլ ծառայությունների հետ,
- ապահովել տրամադրված աջակցության հաշվառում և արդյունքների պարբերական գնահատում:

2. Կացարանային և բնակարանային աջակցության համակարգի զարգացում

Առաջարկվում է՝

- գնահատել անօթևանության կամ կացարանի կորստի ռիսկի տակ գտնվող անձանց և ընտանիքների բնակարանային կարիքները,
- ներդնել բնակվարձի և, անհրաժեշտության դեպքում, կոմունալ ծախսերի փոխհատուցման հասցեական մեխանիզմներ,
- ստեղծել կամ հասանելի դարձնել անհետաձգելի և ժամանակավոր կացարանի ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց ու ընտանիքների համար,
- մշակել սոցիալական բնակարանային աջակցության համայնքային ծրագրեր,
- ուսումնասիրել համայնքում առկա բնակարանային ֆոնդի և համայնքային այլ ռեսուրսների օգտագործման հնարավորությունները,
- աջակցել ժամանակավոր կամ անմխիթար պայմաններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների փուլային բարելավմանը,
- զարգացնել ժամանակավոր կացարանից դեպի հնարավորինս կայուն բնակարանային լուծում անցնելու ուղեկցման մեխանիզմներ,
- կացարանային աջակցությունը համադրել սոցիալական աշխատանքի, զբաղվածության, առողջապահական և այլ անհրաժեշտ ծառայությունների հետ:

3. Զբաղվածության խթանման և տնտեսական ակտիվացման ծառայությունների զարգացում

Առաջարկվում է՝

- իրականացնել շահառուների մասնագիտական կողմնորոշում և աշխատանքային կարողությունների գնահատում,
- կազմակերպել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան վերապատրաստման և վերամասնագիտացման ծրագրեր,
- տրամադրել աշխատանքի որոնման, դիմելու և հարցազրույցին պատրաստվելու աջակցություն,
- ներդնել աշխատանքի տեղավորման և աշխատավայրում հարմարման ուղեկցման ծառայություններ,
- զարգացնել հաշմանդամություն ունեցող անձանց և աշխատաշուկայում անմրցունակ այլ խմբերի աջակցվող զբաղվածության հնարավորությունները,
- համագործակցել գործատուների հետ՝ թիրախային խմբերի զբաղվածությունը խթանելու նպատակով,
- աջակցել աշխատատեղերի մատչելիության և անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների ապահովմանը,
- զարգացնել ինքնազբաղվածության և փոքր եկամուտ ստեղծող գործունեության աջակցության ծրագրեր,
- խթանել սոցիալական ձեռնարկատիրությունը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց զբաղվածության հնարավորություններ ստեղծելու նպատակով:
- **Աջակցել հետևյալ հնարավոր ծրագրերի իրականացմանը՝**

  ✔ «Առաջին աշխատանք»՝ երիտասարդների զբաղվածության աջակցություն Համագործակցություն գործատուների հետ մասնագիտական կողմնորոշում, կարճաժամկետ պրակտիկա և մենթորություն և ե րիտասարդների աշխատանքային փորձի և զբաղվածության հնարավորությունների ավելացում

- ✔ «Կանանց տնտեսական ակտիվացում»՝Մասնագիտական վերապատրաստումներ, ձեռնարկատիրական հմտությունների զարգացում, ինքնազբաղվածության խորհրդատվություն Աշխատաշուկայից դուրս մնացած կանանց տնտեսական ակտիվության բարձրացում
- ✔ «Գյումրիի զբաղվածության գործընկերային հարթակ»՝ Համայնքապետարանի, Միասնական սոցիալական ծառայության, կրթական հաստատությունների և գործատուների համագործակցություն,
- ✔ Սոցիալական ձեռնարկատիրության խթանում՝ 50 և ավելի տոկոս հաշմանդամություն ունեցող, բազմազավակ, միածնող, կամ սոցիալապես անապահով համարվող աշխատակիցներով կազմակերպություններ) խթանում՝ համայնքապետարանի կողմից վճարների զեղչման միջոցով

4. Տեղափոխման աջակցության ծառայությունների հասանելիության բարձրացում

Առաջարկվում է՝

- սահմանել տեղափոխման աջակցության կարիք ունեցող շահառուների ընտրության և աջակցության տրամադրման չափանիշներ,
- ներդնել ճանապարհածախսի փոխհատուցման մեխանիզմներ,
- ներդնել սոցիալական տեղափոխման՝ «Սոցիալական տաքսի» ծառայություն,
- ծառայությունը հասանելի դարձնել հաշմանդամություն ունեցող, տարեց, տեղաշարժվելու դժվարություններ և առողջական խնդիրներ ունեցող անձանց համար,
- ապահովել անվտանգ, արժանապատիվ և հնարավորինս մատչելի տեղափոխում դեպի առողջապահական, սոցիալական, կրթական, պետական և համայնքային կառույցներ, ինչպես նաև համայնքային մասնակցության այլ վայրեր,
- հնարավորության դեպքում օգտագործել մատչելի կամ հարմարեցված փոխադրամիջոցներ,
- անհրաժեշտության դեպքում տրամադրել ուղեկցման աջակցություն:

5. Սոցիալական ծառայությունների համակարգման և ուղղորդման միասնական համակարգի ձևավորում

Առաջարկվում է՝

- քարտեզագրել համայնքում գործող սոցիալական և հարակից ծառայությունները,
- ստեղծել ծառայությունների միասնական և պարբերաբար թարմացվող տեղեկատվական շտեմարան կամ հարթակ,
- ձևավորել ծառայություն մատուցող կազմակերպությունների և մասնագետների ռեեստր,
- սահմանել կառույցների միջև ուղղորդման հստակ ընթացակարգեր,
- ապահովել ուղղորդման արդյունքի վերաբերյալ հետադարձ կապ,
- զարգացնել սոցիալական դեպքի վարման և միջմասնագիտական քննարկումների մեխանիզմներ,
- կազմակերպել պետական, համայնքային և ոչ պետական կառույցների պարբերական համակարգման հանդիպումներ,

- ապահովել տարբեր ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակումը և շահառուի շարունակական ուղեկցումը:

6. Երեխաների զարգացման, վերականգնման և ընտանիքակենտրոն ծառայությունների զարգացում

Առաջարկվում է՝

- ներդնել կամ ընդլայնել վաղ հայտնաբերման և վաղ միջամտության ծառայությունները,
- զարգացնել երեխաների զարգացման, վարքային, հաղորդակցման, հոգեբանական և սոցիալական աջակցության ծրագրերը,
- ապահովել երեխայի կարիքների բազմամասնագիտական գնահատում և աջակցություն,
- ծառայությունները կազմակերպել ընտանիքակենտրոն մոտեցմամբ՝ ներգրավելով ծնողներին և խնամողներին,
- իրականացնել ծնողական խորհրդատվության և հոգեսոցիալական աջակցության ծրագրեր,
- զարգացնել ծնողավարման և կենցաղավարման հմտությունները,
- տրամադրել ընտանեկան հարաբերությունների և կոնֆլիկտների կարգավորման աջակցություն,
- անհրաժեշտության դեպքում զարգացնել ֆինանսական գրագիտության հմտությունները,
- տրամադրել ճգնաժամային իրավիճակներում խորհրդատվություն և դեպքի ուղեկցում,
- ապահովել սոցիալական, կրթական և առողջապահական համակարգերի միջև համագործակցությունն ու երեխայի շարունակական ուղղորդումը:

7. Հոգեկան առողջության համայնքահենք ծառայությունների զարգացում

Առաջարկվում է՝

- զարգացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքահենք սոցիալական և հոգեսոցիալական աջակցության ծառայություններ,
- անհրաժեշտության դեպքում կիրառել նաև մոբիլ ծառայությունների ձևաչափ,
- իրականացնել հոգեկան առողջության խնդիրների վաղ հայտնաբերման և համապատասխան ծառայություններին ուղղորդման ծրագրեր,
- ապահովել ճգնաժամային իրավիճակներում սոցիալական և հոգեբանական արձագանք,
- զարգացնել հոգեսոցիալական վերականգնման և առօրյա կյանքի հմտությունների ծրագրեր,
- տրամադրել աջակցություն ընտանիքի անդամներին և խնամողներին,
- ստեղծել սոցիալական ակտիվացման, զբաղվածության և համայնքային ներառման հնարավորություններ,
- ապահովել սոցիալական, առողջապահական և հոգեկան առողջության ծառայությունների միջև շարունակական համագործակցություն:

8. Տնային խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների ընդլայնում

Առաջարկվում է՝

- ընդլայնել տնային խնամքի ծառայությունների ծավալն ու շահառուների ընդգրկումը,
- ծառայությունները հասանելի դարձնել միայնակ բնակվող տարեցների, հաշմանդամություն ունեցող և խնամքի կարիք ունեցող այլ անձանց համար,
- իրականացնել անձի խնամքի կարիքների անհատական գնահատում,
- յուրաքանչյուր շահառուի համար մշակել խնամքի և սոցիալական սպասարկման անհատական պլան,
- տնային խնամքը համադրել կենցաղային, սոցիալական, հոգեբանական և առողջապահական աջակցության հետ,
- ընդլայնել ցերեկային սպասարկման և սոցիալական ակտիվացման ծառայությունները,
- ցերեկային ծառայությունների շրջանակում ապահովել սոցիալական շփման, ակտիվության, հոգեբանական աջակցության և ինքնասպասարկման կարողությունների պահպանման ծրագրեր,
- աջակցել ընտանիքի անդամներին և ոչ ֆորմալ խնամողներին,
- ապահովել ծառայությունների շարունակականությունը համայնքի, պետական կառույցների և ՔՀԿ-ների համագործակցությամբ:

9. Անկախ կյանքի և սոցիալական վերականգնման ծառայությունների զարգացում

Առաջարկվում է զարգացնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական վերականգնման և անկախ կյանքի ծառայություններ՝ ուղղված անձի ինքնուրույնության, առօրյա գործունեության և համայնքային մասնակցության բարձրացմանը, այդ թվում՝

- անձի ֆունկցիոնալության և առօրյա գործունեության գնահատում,
- էրգոթերապևտիկ աջակցություն,
- հաղորդակցման և խոսքի զարգացման ծառայություններ,
- տարածական կողմնորոշման և շարժունակության զարգացում,
- ադապտիվ ֆիզիկական ակտիվության ծառայություններ,
- սոցիալական և հաղորդակցման հմտությունների զարգացում,
- կրթության և զբաղվածության նախապատրաստում,
- առօրյա կյանքի և ինքնասպասարկման հմտությունների զարգացում,
- աջակցող միջոցների անվտանգ և ինքնուրույն օգտագործման ուսուցում,
- այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցության միջոցների օգտագործման ուսուցում,
- սպիտակ ձեռնափայտի օգտագործման և տարածական կողմնորոշման ուսուցում,
- համակարգչից, հեռախոսից և թվային ծառայություններից օգտվելու հմտությունների զարգացում,
- տնային պայմանների մատչելիության գնահատում և հարմարեցում,
- աշխատավայրի և անհատական փոխադրամիջոցի հարմարեցման աջակցություն,
- «հավասարը հավասարին» փոխօգնության և աջակցության խմբերի զարգացում,
- անձնական օգնականի և այլ աջակցող ծառայություններից օգտվելու վերաբերյալ իրազեկում և ուղղորդում:

Ծառայությունները կարող են իրականացվել գործող ՔՀԿ-ների և մասնագետների կարողությունների ընդլայնմամբ՝ կենտրոնային, տնային կամ մոբիլ ձևաչափերով:

10. Սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական ծառայությունների ընդլայնում

Առաջարկվում է զարգացնել՝

- անհատական, ընտանեկան և խմբային հոգեբանական աջակցության ծառայություններ,
- սոցիալական և իրավական խորհրդատվություն,
- ծնողական և ընտանեկան աջակցության ծրագրեր,
- ճգնաժամային միջամտության ծառայություններ,
- ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման աջակցություն,
- սոցիալական դեպքի վարում և շարունակական ուղեկցում,
- փոխօգնության և աջակցության խմբեր,
- տնային և մոբիլ ծառայությունների ձևաչափեր՝ հատկապես հասանելիության կամ շարժունակության խնդիր ունեցող անձանց համար:

11. Բնակչության՝ սոցիալական իրավունքների և ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում

Առաջարկվում է՝

- իրականացնել համայնքային իրազեկման պարբերական ծրագրեր սոցիալական իրավունքների, ծառայությունների և դրանցից օգտվելու ընթացակարգերի վերաբերյալ,
- մշակել և տարածել պարզ, հասկանալի և մատչելի տեղեկատվական նյութեր,
- ստեղծել կամ զարգացնել համայնքային թվային տեղեկատվական հարթակներ,
- հրապարակել ծառայությունների, դիմելու պայմանների, անհրաժեշտ փաստաթղթերի և պատասխանատու կառույցների վերաբերյալ արդիական տեղեկատվություն,
- տեղեկատվությունը տրամադրել տարբեր խմբերի համար հասանելի ձևաչափերով,
- կազմակերպել թիրախային խմբերի համար իրազեկման հանդիպումներ և խորհրդատվություն,
- իրազեկման աշխատանքը կապել ծառայությունների միասնական շտեմարանի և ուղղորդման համակարգի հետ:

12. Սոցիալական ծառայությունների մատուցման մասնագիտական ներուժի և բազմամասնագիտական համագործակցության զարգացում

Առաջարկվում է՝

- գնահատել համայնքում անհրաժեշտ մասնագետների առկա և պահանջվող ներուժը,
- կազմակերպել սոցիալական աշխատողների, հոգեբանների, խնամքի աշխատողների, վերականգնողական և այլ մասնագետների շարունակական վերապատրաստումներ,
- զարգացնել բազմամասնագիտական թիմային աշխատանքի կարողությունները,
- ստեղծել համայնքում գործող մասնագետների և ծառայություն մատուցող կազմակերպությունների ռեեստր,
- ձևավորել մասնագիտական համագործակցության և փորձի փոխանակման հարթակ,
- կազմակերպել բարդ դեպքերի համատեղ մասնագիտական քննարկումներ,
- զարգացնել մասնագիտական սուպերվիզիայի և մեթոդական աջակցության հնարավորությունները,
- խթանել համայնքում պակասող մասնագետների ներգրավումը,

- դիտարկել տարբեր կազմակերպությունների կողմից մասնագիտական ռեսուրսների համատեղ օգտագործման հնարավորությունը:

3. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Ենթածրագիր N 1

Անվանումը՝ Բնաիրային աջակցություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Գյումրու բնակիչներին **Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝** Բնաիրային աջակցության տրամադրում ծրագրի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին՝ առաջնային բնաիրային կարիքների բավարարման նպատակով:				
Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը	Բնաիրային աջակցության կարիք ունեցող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարում:			
Ենթածրագրի բնույթը՝ համաձայն Հավելվածի 6-րդ կետի	**Միջամտող և կանխարգելիչ**			
Ենթածրագրի նպատակը	Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց առաջնային սոցիալական կարիքների բավարարմանը՝ բնաիրային աջակցության տրամադրման միջոցով:			
Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և	**Գործողություն**	**Պատասխանատուներ**	**Մեկնարկի ժամկետ**	**Ավարտի ժամկետ**
	Շահառուների դիմումների ընդունում, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության ստուգում և դիմումների ուսումնասիրություն:	Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանում	01.01.2027	31.12.2029

<table>
<tr><td rowspan="2">իրականացման ժամանակացույցը</td><td colspan="2">Շահառուների ցանկի ձևավորում, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում և հաստատում ավագանու որոշմամբ:</td><td>Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանում / Համայնքի ավագանի</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td colspan="2">Ավագանու որոշմամբ հաստատված շահառուներին բնաիրային աջակցության ծախսի փոխհատուցում՝ վկայագրի միջոցով, և տրամադրված աջակցության հաշվառում:</td><td>Համայնքապետարանի համապատասխան և ֆինանսական ստորաբաժանումներ</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td>Ենթածրագրի շահառուները</td><td colspan="5">Ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխանող՝ բնաիրային աջակցության կարիք ունեցող անձինք և ընտանիքները: Շահառուների ընտրության չափանիշները և աջակցության տրամադրման պայմանները սահմանվում են համայնքի ավագանու որոշմամբ:</td></tr>
<tr><td rowspan="2">Ենթածրագրի հիմնական արդյունքները</td><td rowspan="2">Շահառուների թիվը</td><td>Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա</td><td>2027</td><td>2028</td><td>2029</td></tr>
<tr><td>2026 թ.՝ չի հաշվարկվել, քանի որ աջակցության տվյալ ձևաչափը նոր է ներդրվում</td><td>1 000</td><td>1 100</td><td>1 200</td></tr>
<tr><td>Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները</td><td colspan="5">Շահառու ընտանիքների առաջնային նյութական կարիքների բավարարում, սոցիալական դժվարությունների մեղմացում և ընտանիքների սոցիալական վիճակի հետագա վատթարացման ռիսկի նվազեցում:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի բյուջեն</td><td colspan="5">2027 թ.՝ 20 000 000 դրամ 2028 թ.՝ 22 000 000 դրամ 2029 թ.՝ 24 000 000 դրամ: Ընդամենը՝ 66 000 000 դրամ:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="5">Համայնքապետարանի համապատասխան աշխատակազմ, դիմումների ընդունման և հաշվառման կազմակերպման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև համագործակցություն համապատասխան մատակարարների հետ:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները</td><td colspan="5">Դիմումների մեծ ծավալ կամ թերի փաստաթղթեր, վկայագրերի օգտագործման հետ կապված կազմակերպական խնդիրներ, նախատեսված բյուջեի անբավարարություն: Ռիսկերի կառավարումը կիրականացվի փաստաթղթերի նախնական ստուգման, շահառուների ցանկերի հստակ ձևավորման, վկայագրերի օգտագործման հաշվառման և բյուջեի պարբերական վերահսկման միջոցով:</td></tr>
<tr><td>Այլ նշումներ</td><td colspan="5">Աջակցությունը տրամադրվում է վկայագրի միջոցով՝ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված շահառուներին:</td></tr>
</table>

3.2. Ենթածրագիր N 2

<table>
<tr><td colspan="6">Անվանումը՝ Կացարանով ապահովում՝ բնակվարձի փոխհատուցման ձևով անօթևանության խնդրի առջև կանգնած Գյումրու բնակիչ ներին
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Կացարանի կարիք ունեցող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին բնակվարձի փոխհատուցման աջակցություն:</td></tr>
<tr><td>Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը</td><td colspan="5">Կացարանի բացակայության կամ բնակարանային ծախսերը հոգալու դժվարության պայմաններում ժամանակավոր բնակության ապահովման կարիք:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի բնույթը՝ համաձայն Հավելվածի 6-րդ կետի</td><td colspan="5">Միջամտող և կանխարգելիչ</td></tr>
<tr><td>Ենթածրագրի նպատակը</td><td colspan="5">Նվազեցնել կացարանի բացակայության կամ բնակվարձի վճարման դժվարության հետևանքով առաջացող սոցիալական խոցելիությունը, կառավարել նրանց անօթևանության առջև կանգելու ռիսկերը:</td></tr>
<tr><td rowspan="4">Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը</td><td colspan="2">Գործողություն</td><td>Պատասխանատուներ</td><td>Մեկնարկի ժամկետ</td><td>Ավարտի ժամկետ</td></tr>
<tr><td colspan="2">Շահառուների դիմումների ընդունում, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության ստուգում և դիմումների ուսումնասիրություն:</td><td>Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանում</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td colspan="2">Շահառուների ցանկի ձևավորում, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում և հաստատում ավագանու որոշմամբ:</td><td>Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանում / Համայնքի ավագանի</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td colspan="2">Ավագանու որոշմամբ հաստատված շահառուների բնակվարձի կամ կացարանով ապահովման ծախսի փոխհատուցում՝ համապատասխան պայմանագրի առկայության դեպքում, փոխանցման միջոցով, և վճարումների հաշվառում:</td><td>Համայնքապետարանի համապատասխան և ֆինանսական ստորաբաժանումներ</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td>Ենթածրագրի շահառուները</td><td colspan="5">Ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխանող՝ կացարանի կամ բնակվարձի փոխհատուցման կարիք ունեցող անձինք և ընտանիքները: Շահառուների ընտրության չափանիշները և աջակցության տրամադրման պայմանները սահմանվում են համայնքի ավագանու որոշմամբ:</td></tr>
<tr><td rowspan="2">Ենթածրագրի հիմնական արդյունքները</td><td rowspan="2">Շահառուների թիվը</td><td>Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա</td><td>2027</td><td>2028</td><td>2029</td></tr>
<tr><td>2026 թ.՝ չի հաշվարկվել, քանի որ աջակցության տվյալ ձևաչափը նոր է ներդրվում</td><td>50</td><td>50</td><td>50</td></tr>
<tr><td>Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները</td><td colspan="5">Շահառուների անվտանգ և կայուն կացության պայմանների ապահովում, կացարանի կորստի կամ անօթևանության ռիսկի նվազեցում և բնակարանային դժվարությունների մեղմացում:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի բյուջեն</td><td colspan="5">2027 թ.՝ 4 000 000 դրամ 2028 թ.՝ 4 000 000 դրամ 2029 թ.՝ 4 000 000 դրամ: Ընդամենը՝ 12 000 000 դրամ:</td></tr>
</table>

Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքապետարանի համապատասխան աշխատակազմ, դիմումների և պայմանագրերի ստուգման վարչական ու տեխնիկական միջոցներ, ֆինանսական փոխանցումների կազմակերպման ռեսուրսներ, ինչպես նաև անհրաժեշտ համագործակցություն բնակարան տրամադրողների կամ այլ համապատասխան կողմերի հետ:
Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները	Թերի կամ ոչ պատշաճ ձևակերպված պայմանագրեր, բնակվարձի կամ կացարանի ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն, վճարումների ուշացում կամ նախատեսված բյուջեի անբավարարություն: Ռիսկերի կառավարումը կիրականացվի փաստաթղթերի ստուգման, փոխհատուցումը միայն համապատասխան պայմանագրի առկայության դեպքում իրականացնելու, վճարումների հաշվառման և բյուջեի պարբերական վերահսկման միջոցով:
Այլ նշումներ	Փոխհատուցումը կատարվում է համապատասխան պայմանագրի առկայության դեպքում՝ փոխանցման միջոցով, համայնքի ավագանու որոշմամբ հաստատված շահառուներին:

3.3. Ենթածրագիր N 3

<table>
<tr><td colspan="5">Անվանումը՝ Տեղափոխման աջակցություն՝ փոխհատուցման ձևով՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Գյումրու բնակիչներին
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Տեղափոխման կարիք ունեցող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անհրաժեշտ ուղևորությունների արժանապատիվ կազմակերպման կամ դրանց ծախսերի փոխհատուցման աջակցություն, այդ թվում հատուկ փոխադրամիջոցների միջոցով:</td></tr>
<tr><td>Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը</td><td colspan="4">Սոցիալական, առողջապահական, կրթական կամ այլ անհրաժեշտ ծառայություններին հասանելիության համար տեղափոխման աջակցության կարիք:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի բնույթը՝ համաձայն Հավելվածի 6-րդ կետի</td><td colspan="4">Միջամտող և կանխարգելիչ</td></tr>
<tr><td>Ենթածրագրի նպատակը</td><td colspan="4">Բարելավել անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը՝ շահառուների տեղափոխման հետ կապված խոչընդոտները նվազեցնելու միջոցով:</td></tr>
<tr><td rowspan="4">Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը</td><td>Գործողություն</td><td>Պատասխանատուներ</td><td>Մեկնարկի ժամկետ</td><td>Ավարտի ժամկետ</td></tr>
<tr><td>Շահառուների դիմումների ընդունում, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության ստուգում և դիմումների ուսումնասիրություն:</td><td>Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանում</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td>Շահառուների ցանկի ձևավորում, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում և հաստատում ավագանու որոշմամբ:</td><td>Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանում / Համայնքի ավագանի</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td>Ավագանու որոշմամբ հաստատված շահառուների տեղափոխման ծախսի փոխհատուցում՝ համապատասխան պայմանագրի և ծառայության մատուցման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում, փոխանցման միջոցով, և վճարումների հաշվառում:</td><td>Համայնքապետարանի համապատասխան և ֆինանսական ստորաբաժանումներ</td><td>01.01.2027</td><td>31.12.2029</td></tr>
<tr><td>Ենթածրագրի շահառուները</td><td colspan="4">Ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխանող՝ տեղափոխման աջակցության կարիք ունեցող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք: Շահառուների ընտրության չափանիշները և աջակցության տրամադրման պայմանները սահմանվում են համայնքի ավագանու որոշմամբ:</td></tr>
</table>

Ենթածրագրի հիմնական արդյունքները	**Շահառուների թիվը**	**Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա**	**2027**	**2028**	**2029**
		2026 թ.՝ չի հաշվարկվել, քանի որ աջակցության տվյալ ձևաչափը նոր է ներդրվում	100	110	120
Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները	Շահառուների անհրաժեշտ ծառայություններին, հաստատություններին և համայնքային ռեսուրսներին հասանելիության բարելավում, տեղաշարժի հետ կապված խոչընդոտների և սոցիալական մեկուսացման ռիսկի նվազեցում:				
Ենթածրագրի բյուջեն	2027 թ.՝ 1 000 000 դրամ 2028 թ.՝ 1 100 000 դրամ 2029 թ.՝ 1 200 000 դրամ: Ընդամենը՝ 3 300 000 դրամ:				
Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքապետարանի համապատասխան աշխատակազմ, դիմումների, պայմանագրերի և ծառայության փաստը հավաստող փաստաթղթերի ստուգման վարչական ու տեխնիկական միջոցներ, ֆինանսական փոխանցումների կազմակերպման ռեսուրսներ, ինչպես նաև համագործակցություն տեղափոխման ծառայություններ մատուցողների հետ:				
Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները	Տեղափոխման ծառայության փաստը բավարար կերպով չհիմնավորող փաստաթղթեր, պայմանագրերի թերի ձևակերպում, ծառայության հասանելիության սահմանափակում, վճարումների ուշացում կամ նախատեսված բյուջեի անբավարարություն: Ռիսկերի կառավարումը կիրականացվի պայմանագրերի և ծառայության փաստը հավաստող փաստաթղթերի պարտադիր ստուգման, փոխհատուցումների հաշվառման և ծրագրի բյուջեի պարբերական վերահսկման միջոցով:				
Այլ նշումներ	Փոխհատուցումը կատարվում է համապատասխան պայմանագրի և ծառայության մատուցման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում՝ փոխանցման միջոցով, համայնքի ավագանու որոշմամբ հաստատված շահառուներին:				

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

4.1 **Բնաիրային աջակցություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Գյումրու բնակիչներին**

Միջոցառումներ	**Գնահատված ծախսեր**	**Ֆինանսավորման աղբյուր (նշել չափը)**				**Ֆինանսավորման պակաս / Պակասող միջոցների համալրման եղանակները**
		Համայնքային բյուջե	**Պետական բյուջե, այդ թվում՝ սուբվենցիա**	**Այլ կազմակերպությունների հատկացրած միջոցներ**	**Այլ նախաձեռնությունների, ոչ ֆորմալ խմբերի, անհատների հատկացրած միջոցներ**	
2027 թ.՝ Բնաիրային աջակցություն	20 000 000 դրամ	20 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
2028 թ.՝ Բնաիրային աջակցություն	22 000 000 դրամ	22 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
2029 թ.՝ Բնաիրային աջակցություն	24 000 000 դրամ	24 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
Ընդամենը	**66 000 000 դրամ**	**66 000 000 դրամ**	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ

4.2 Կացարանով ապահովում՝ բնակվարձի փոխհատուցման ձևով անօթևանության խնդրի առջև կանգնած Գյումրու բնակիչներին

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր (նշել չափը)				Ֆինանսավորման պակաս / Պակասող միջոցների համալրման եղանակները
		Համայնքային բյուջե	Պետական բյուջե, այդ թվում՝ սուբվենցիա	Այլ կազմակերպությունների հատկացրած միջոցներ	Այլ նախաձեռնությունների, ոչ ֆորմալ խմբերի, անհատների հատկացրած միջոցներ	
2027 թ.՝ Կացարանով ապահովում / բնակվարձի փոխհատուցում	4 000 000 դրամ	4 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
2028 թ.՝ Կացարանով ապահովում / բնակվարձի փոխհատուցում	4 000 000 դրամ	4 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
2029 թ.՝ Կացարանով ապահովում / բնակվարձի փոխհատուցում	4 000 000 դրամ	4 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
Ընդամենը	**12 000 000 դրամ**	**12 000 000 դրամ**	-	-	-	

4.3 Տեղափոխման աջակցություն՝ փոխհատուցման ձևով՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Գյումրու բնակիչներին

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր (նշել չափը)				Ֆինանսավորման պակաս / Պակասող միջոցների համալրման եղանակները
		Համայնքային բյուջե	Պետական բյուջե, այդ թվում՝ սուբվենցիա	Այլ կազմակերպությունների հատկացրած միջոցներ	Այլ նախաձեռնությունների, ոչ ֆորմալ խմբերի, անհատների հատկացրած միջոցներ	
2027 թ.՝ Տեղափոխման աջակցություն	1 000 000 դրամ	1 000 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
2028 թ.՝ Տեղափոխման աջակցություն	1 100 000 դրամ	1 100 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
2029 թ.՝ Տեղափոխման աջակցություն	1 200 000 դրամ	1 200 000 դրամ	-	-	-	Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով չարգելված միջոցներ
Ընդամենը	**3 300 000 դրամ**	**3 300 000 դրամ**				

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԸ

Գործողությունները	Տևողությունը (սկիզբ–ավարտ)	Յուրաքանչյուր գործողության իրականացված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը	Արդյունքային ցուցանիշներ	Յուրաքանչյուր ցուցանիշի իրացված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը (%)	Հիմնավորումներ, նշումներ
1. Բնաիրային աջակցություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Գյումրու բնակիչներին					
Շահառուների դիմումների ընդունում, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության ստուգում և դիմումների ուսումնասիրություն	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Ընդունված և ուսումնասիրված դիմումների թիվ	___ %	Լրացվում է ըստ հաշվետու ժամանակահատվածի
Շահառուների ցանկի ձևավորում, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում և հաստատում ավագանու որոշմամբ	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Ավագանու որոշմամբ հաստատված շահառուների թիվ	___ %	Լրացվում է ըստ ավագանու որոշումների
Ավագանու որոշմամբ հաստատված շահառուներին բնաիրային աջակցության տրամադրում՝ վկայագրի միջոցով	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Աջակցություն ստացած շահառուների թիվ՝ 2027՝ 1000, 2028՝ 1100, 2029՝ 1200	___ %	Հաշվարկվում է փաստացի աջակցություն ստացած շահառուների թվի հարաբերակցությամբ տարեկան թիրախին
2. Կացարանով ապահովում՝ բնակվարձի փոխհատուցման ձևով անօթևանության խնդրի առջև կանգնած Գյումրու բնակիչներին					
Շահառուների դիմումների ընդունում, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության ստուգում և դիմումների ուսումնասիրություն	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Ընդունված և ուսումնասիրված դիմումների թիվ	___ %	Ըստ դիմումների հաշվառման
Շահառուների ցանկի ձևավորում, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում և հաստատում ավագանու որոշմամբ	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Ավագանու որոշմամբ հաստատված շահառուների թիվ	___ %	Ըստ համապատասխան որոշումների

Հաստատված շահառուների բնակվարձի կամ կացարանով ապահովման ծախսի փոխհատուցում՝ պայմանագրի հիման վրա փոխանցմամբ	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Փոխհատուցում ստացած շահառուների թիվ՝ տարեկան 50	___ %	Հաշվարկվում է փաստացի աջակցություն ստացած շահառուների թվի հարաբերակցությամբ 50-ի
3. Տեղափոխման աջակցություն՝ փոխհատուցման ձևով՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Գյումրու բնակիչներին					
Շահառուների դիմումների ընդունում, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության ստուգում և դիմումների ուսումնասիրություն	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Ընդունված և ուսումնասիրված դիմումների թիվ	___ %	Ըստ դիմումների հաշվառման
Շահառուների ցանկի ձևավորում, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում և հաստատում ավագանու որոշմամբ	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Ավագանու որոշմամբ հաստատված շահառուների թիվ	___ %	Ըստ համապատասխան որոշումների
Տեղափոխման ծախսի փոխհատուցում՝ պայմանագրի և ծառայության մատուցման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում, փոխանցման միջոցով	01.01.2027–31.12.2029	Իրականացվել է ամբողջությամբ / մասամբ / չի իրականացվել	Աջակցություն ստացած շահառուների թիվ՝ 2027՝ 100, 2028՝ 110, 2029՝ 120	___ %	Հաշվարկվում է փաստացի աջակցություն ստացած շահառուների թվի հարաբերակցությամբ տարեկան թիրախին